

DOI: <https://doi.org/10.46991/FLHE/2024.28.1.134>

Աննա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

**ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԵԶԱԿԻ ԹՎԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ և
ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ
(գուգադրական քննության փորձ)**

Սույն աշխատանքում ներկայացվում են գոյականի եզակի թվի արտահայտությունը և իմաստագործառական դրսևորումները երեք լեզուների արդի գրական արևելահայերենի, ռուսերենի և գերմաներենի գուգադրամա՞ր ոչ թե որպես եզակիհոգնակի հակադրության միայն մի բևեռ, այլ որպես գոյականի բազմիմաստ կիրառման արտահայտչամիջոց՝ վեր հանելով նշված լեզուներում այդ կարգի դրսևորման համար ընդհանուր, ինչպես նաև նրանցից միայն մեկին կամ երկուսին բնորոշ յուրահատկությունները: Բազմաթիվ օրինակների վերլուծությունը փաստում է, որ այս երեք լեզուներից յուրաքանչյուրը, ունենալով միայն իրեն բնորոշ բառակազմական և քերականական առանձնահատկություններ, հասկացությանը տարածական ավելի մեծ և ընդհանրական բնույթ հաղորդելու նպատակով հոգնակի թվից առավել կիրառում է գոյականի եզակի թիվը: Իմաստային պլանում թե՛ հայերենի, թե՛ գերմաներենի և թե՛ ռուսերենի պարագայում եզակի թվում գոյականին հատուկ է բազմիմաստությունը, իսկ կառուցվածքային տեսակետից նշույթավորման և համադրական կառույցների գործածումը:

Բանալի բառեր. քերականական կարգ, եզակի, հոգնակի, նշույթավորված, աննշույթ, բառաձև, բառային թիվ, քերականական թիվ

Ներածություն

Անվան թվի քերականական կարգով արտահայտվում է առարկաների քանակը՝ մեկ և մեկից ավելի: Ըստ այդմ՝ տարբերակում ենք գոյականի երկու թիվ՝ եզակի (մեկ առարկա) և հոգնակի (մեկից ավելի): Ինչպես գիտենք, քերականական կարգերը միշտ որոշվում են ձևերի

* annasoghomonyan@ysu.am ORCID: 0009-0000-0125-4377



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 02/02/2024
Revised: 25/03/2024
Accepted: 30/04/2024

© The Author(s) 2024

հակադրությամբ. Եթե չկա ձևերի հակադրություն, ուրեմն և չկա քերականական կարգ, քանի որ քերականական կարգի անդամները երկուսից պակաս լինել չեն կարող: Գոյականի թվի կարգն իրենից ենթադրում է եզակի – հոգնակի հակադրություն, ինչի արդյունքում էլ ձևավորում ու զարգանում է տվյալ քերականական կարգը: Եթե բայի թվի քերականական կարգը համաձայնեցվում է գոյականի թվի հետ նախադասության մեջ (հայերեն, գերմաներեն, ռուսերեն), իսկ ածականի դեպքում՝ գոյականի հետ (ռուսերեն, գերմաներեն) կազմելով բառակապակցություն, ապա գոյականի թվի քերականական կարգը դիտում է որպես ինքնուրույն, շարահյուսական կապակցումներից գատ:

Երբեմն բախվում ենք այն թյուր կարծիքին, որ թվի կարգը հնարավոր է ուսումնասիրել միայն հոգնակի թվի կառույցների տեսանկյունից, քանի որ եզակի թիվը չունի վերջավորություն և բնութագրվում է որպես զրո վերջավորությամբ չնշույթավորված կառույց: Մեր նպատակն է, սակայն, բովանդակային տեսանկյունից զուգադրական քննության ենթարկելով արդի գրական արևելահայերենի, գերմաներենի և ռուսերենի գոյականի եզակի թվի կարգը, վեր հանել նշված լեզուներում այդ կարգի դրսևորման համար ընդհանուր, ինչպես նաև նրանցից միայն մեկին կամ երկուսին բնորոշ յուրահատկությունները:

Շամանակակից գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում թվի քերականական կարգը ներկայացված է երկդասյա հակադրությամբ՝ եզակի և հոգնակի: Եզակի թիվը ցույց է տալիս ոչ տրոհելի, անհաշվելի, միասնական, հավաքական առարկաներ, իսկ հոգնակի թիվը՝ տրոհելի, հաշվելի, քանակայնության ցուցիչների առկայությամբ պայմանավորված քանակայնություն: Թվի քերականական կարգն առաջին հերթին ի հայտ է գալիս գոյականի հոլովման հոգնակի թվի արտահայտման պլանում: Անշուշտ, գերմաներենի գոյականների մեծ մասն ունակ են կազմելու թվակարգի երկու՝ եզակի և հոգնակի տարբերակները, սակայն գոյականի տարբեր խմբեր առանձնանում են թվակազմության հանդեպ ունեցած իրենց սահմանափակումներով (Helbig, Buscha, 2000, էջ 126):

Իհարկե բառի քանակային իմաստն հնարավոր է իրացնել նաև քանակական թվականներով, սակայն, ի տարբերություն հոգնակիակերտ մասնիկների միջոցով կազմված հոգնակիի, վերջիններս արտահայտում են գուցե շատ, բայց սահմանափակ թիվ, իսկ գոյականի թիվն ունի մեկի և մեկից ավելի քանակային հարաբերության կողմեր:

Գոյական անվան թիվն ամենից ավելի զգայուն է բառի իմաստային դաշտի նկատմամբ: Իմաստային առումով նշված երեք լեզուներում էլ թվի կարգը ցույց է տալիս, որ տվյալ առարկան հանդես է գալիս մեկ կամ մեկից ավելի կարգային ցուցիչով, սակայն դա լիակատար, քերականական կարգային տեսանկյունից թերևս անթերի տարբերակն է, որը ոչ

միշտ է հնարավոր ստանալ, այդ իսկ պատճառով թվի տեսակետից բոլոր գոյականները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

- գոյականներ, որոնք ունեն ն եզակի, և՛ հոգնակի թիվ,
- գոյականներ, որոնք ունեն միայն եզակի թվի ձև (անհոգնական գոյականներ. լատ. *singluaria tantum*),
- գոյականներ, որոնք ունեն միայն հոգնակի թվի ձև և, որպես կանոն, եզակի թվով գործածվել չեն կարող (լատ. *pluralia tantum*):

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ շատ հաճախ տվյալ լեզվի իմաստաբանական և բառակազմական հնարավորություններով է պայմանավորված՝ արդյոք տվյալ առարկան կդիտվի հաշվելի որպես մեկ առարկա, թե ոչ:

Գոյականի եզակի թվի դրսևորման առանձնահատկությունները դասակարգման հայեցակետից

Քերականորեն գոյականները հնարավոր է բաժանել երկու մեծ խմբի՝ թանձրացական և վերացական գոյականներ, իսկ թանձրացական (որոշակի) գոյականներն իրենց հերթին հասարակ և հատուկ գոյականներ, հավաքական գոյականներ և նյութ ցույց տվող գոյականներ:

Այս խմբերից մի քանիսը թվի, առանձնապես եզակիի արտահայտման ու իրացման շրջանականերում ունեն առանձնահատուկ դրսևորումներ:

Հասարակ և հատուկ գոյականները, տարբերվելով իմաստաբանորեն, ունեն նաև քերականական տարբերություններ: Եթե հասարակ գոյականների մեծ մասն ունի եզակի և հոգնակի թվի կազմության ու գործածության հնարավորություն, նույնը հնարավոր չէ ասել հատուկ գոյականների մասին: Այս խմբերի սահմանները, սակայն, տարանջատված չեն միմյանցից, և հաճախ հնարավոր է դառնում դրանց խաչաձևումը, երբ հատուկ անունները կիրառվում են որպես հասարակ գոյականներ կամ հակառակը: Այս միտումը հանգեցնում է համանունների առաջացմանը, ինչպես օրինակ՝ *ծաղիկ* (ծաղկող բույսերի դասն առհասարակ) և *Ծաղիկ* (անձնանուն), *ավազ* (երեց) և *Ավազ* (անձնանուն), *հարություն* (վերածնունդ) և *Հարություն* (անձնանուն), ռուսերենում՝ *Бера* (անձնանուն) և *бера* (հավատ): Գերմաներենում այս միտումը հատկապես ակնառու է ազգանունների դեպքում, ինչպես օրինակ, *Herz* (սիրտ) և որպես ազգանուն՝ *Michael Herz, Bauer* (գյուղացի) և անձնանուն՝ *Angela Bauer*:

Ինչ վերաբերում է թանձրացական և վերացական գոյականներին, ապա առաջին խմբին պատկանող գոյականները նշում են որոշակի առարկաներ, որոնք ունեն ն եզակի, և՛ հոգնակի թվի կազմության հնարավորություն, մինչդեռ վերացական գոյականները, որոնք արտահայտում են գործողություն, հատկություն, մարդու մտավոր և հոգեկան

կարողություն, չեն կարող լրացվել քանակական թվականներով և գործածվել հոգնակի թվով: Սակայն, ինչպես հասարակ և հատուկ գոյականների դեպքում, այս խմբի գոյականների միջև ևս հնարավոր է խաչաձևում, որի հետևանքով վերացական, հատկապես շարժում, հատկություն ցույց տվող գոյականներն ունենում են հոգնակի թվի ցուցիչներ *-եր, -ներ* ստանալու, հետևաբար հոգնակի թվով կիրառվելու հնարավորություն, կամ թվի բազմակի իրացվում է քանակական թվականով արտահայտված լրացման միջոցով:

Բառի առաջնային և փոխաբերական իմաստները ևս կարող է ունենալ թվակազմության միմյանցից տարբեր դրսևորումներ, այսպես *ծաղիկ* մի դեպքում ունենք հասարակ գոյական, որ նշում է առհասարակ բուսատեսակը. այս պարագայում հնարավոր է դառնում եզակի - հոգնակի բևեռների իրացումն ու թվակարգի քերականական հատկանիշի քննումը: Մյուս դեպքում, երբ բառն օգտագործվում է փոխաբերական, իմաստային այլ մեկնաբանությամբ, ինչպես, օրինակ, *ծաղիկ հիվանդություն*, ունենում ենք միայն եզակիի ձև, որն արդեն անհոգնական գոյականների շարքին է դասվում: Հայերենի համար՝ «Նա մի սեթևեթ կին էր նուրբ դիմագծերով ու կապույտ աչքերով, որի կոկիկ շպարն անգամ ի գորու չէր թաքցնել ծաղկի («ծաղիկ հիվանդություն» ծաղիկ հիվանդությունը Ա. Ս.) մանր հետքերը»: Անդրադառնալով հիվանդությունների անվանումներին կարող ենք նշել, որ ռուսերենում, ինչպես հայերենում, վերջիններս կիրառվում են եզակի թվով (հմմտ. ветрянка «ջրծաղիկ», краснуха «կարմրախտ», корь «կարմրուկ», оспа «ծաղիկ, ջրծաղիկ»: «Девочки Оганесян заболели только через сутки, но высокой температуры у них не было, их ветрянка прошла в легкой форме» (Улицкая, 2011, էջ 56) (թրգմ. «Հովհաննիսյան աղջիկները հիվանդացել են միայն մեկ օր անց, սակայն նրանք բարձր ջերմություն չեն ունեցել, իսկ նրանց ջրծաղիկը թեթև է անցել» Ա.Ս.):

Գերմաներենի դեպքում, սակայն, հիվանդությունների մի ամբողջ շարք ունի միայն հոգնակի ձև Maser-*n* «կարմրուկ», Windpocke-*n* «ջրծաղիկ», Röteln-*n* «կարմրախտ» և այլն: „Im Verlauf seiner Kindheit überlebte er die Masern, die Ruhr, die Windpocke-*n* (հոգնակի թիվ), die Cholera, einen Sechsmetersturz in einen Brunnen und die Verbrühung der Brust mit kochendem Wasser.“ (Süskind, 1985, էջ 27) (թրգմ. «Մանկության տարիներին նա վերապրել է կարմրուկը, դիզենտերիան, ջրծաղիկը (բառացի ջրծաղիկները Ա.Ս.), խոլերան, վեց մետրանոց ջրհորն ընկնելը և եռացող ջրով կուրծքն այրելը »):

Բազմիմաստ բառերի դեպքում ևս երեք լեզուներն ունեն թվակարգի իրացման տարբեր դրսևորումներ, ինչպես, օրինակ, գերմաներենում՝ der Reif - հոգնակի die Reife – օղակ «սկավառակ» իմաստով, իսկ նույն բառը՝ der Reif «եղյամ» իմաստով, որպես գոյական, որ ցույց է տալիս բնության երևույթ, անհոգնական է: Ռուսերենում. долг – պարտք (այս դեպքում

բառն ունի համապատասխան հոգնակի թվով բառաձևի իրացում) – долги (համանուն բառը նշանակում է պարտավորություն, որը ունի հիմնականում եզակի թվով կիրառություն, իսկ հոգնակի թիվը գործածելի է ոճական նկատառումներով): Այս համանուններն իմաստով բավականին մոտ են և բառաբարդման դեպքում նույնպես, ունենալով արմատական նույն ծագումը, ցուցաբերում են սերտ նմանություն, ինչպես долг – должник – должен:

Հայերենում՝ մարտ՝ ամիս իմաստով, որն ունի միայն եզակի թվի ձև, անհոգնական է, սակայն իմաստային այլ դրսևորմամբ՝ ճակատամարտ, այն լիարժեք կազմում է հոգնակի՝ մարտ-եր:

Բառերի դարձվածքների կազմում կիրառումը ևս եռալեզու ուսումնասիրման տեսանկյունից ունի հետաքրքիր դրսևորումներ: Ինչպես հայերենում, այնպես էլ գերմաներենում և ռուսերենում, երբ մարմնի մասերի անվանումները գործածվում են իրենց հիմնական իմաստով, ունեն ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի տարբերակներ, սակայն, երբ բառն օգտագործվում է դարձվածքում, որտեղ պահպանվում է վերջինիս հիմնական իմաստը, գործածվում է միայն եզակի թվով, այն է՝ իր հիմնական՝ ոչ նշույթավորված տարբերակով: Օրինակ՝ «Նրանք նոր միայն գլխի ընկան, թե ինչու եկվորները տեղնուտեղը չսպանեցին իրենց» (Գյումրեցի, 1990, էջ 89):

«Турки начинают терять голову и, по доносам греков, без разбору хватают и сажают в тюрьмы болгар» (Вишняков, 2007, էջ 40) (թրգմ. «Թուրքերը սկսում են իրենց գլուխը կորցնել, և, ինչպես տեղեկացնում են հույները, առանց մտածելու բռնում և ձերբակալում են բուլղարացիներին» Ա.Ս.):

„Die Situation ist ziemlich kritisch, aber wir sollen jetzt nicht den Kopf verlieren!“ (թրգմ. «Իրավիճակը բավականին օրհասական է, բայց մենք մեր գլուխը չպետք է կորցնենք» Ա.Ս.):

Որոշ դեպքերում գոյականների քերականական եզակի թիվը ցույց է տալիս, որ այն վերցված է ոչ թե քանակային մեկ ցուցիչով, այլ այնպիսի ծավալայնությամբ, որ անհնար է առանձնացնել, տրոհել ամբողջից, քանի որ, որքան փոքր են հասկացությունները, այնքան նվազում է տրոհելիության հնարավորությունը, ու այն ընկալվում է որպես ամողջականություն (Krifka, 2000, էջ 7): Այսպես, ռուսերենում ունենք горох «ոլոռ» բառը, որ նշանակում է և՛ եզակի թիվ՝ մեկ առարկա, և՛ զանգված, որի կազմում ենթադրվում է որոշակի քանակի ոլոռ, սակայն հատկանշական է, որ հստակ հատիկը նշելու համար կա հատուկ բառ горошина «ոլոռի հատիկ»: Այսպիսով՝ горох-ը արտահայտում է իմաստային հոգնակիություն, իսկ горошина-ն՝ քերականական եզակիություն, որն ունի հոգնակիի կազմության հնարավորություն՝ горошины: Ասվածից կարելի է եզրակացնել, որ բառի իմաստային թիվն առավել պարզ է դառնում համատեքստում կամ քանակային այլ լրացումների հետ կիրառման

պարագայում: Ասվածը քննենք գուգադրվող երեք լեզուների համապատասխան օրինակների միջոցով:

Ռու. *горох* – *горошина*, հյ. ոլոռ, սիսեռ – սիսեռահատիկ, գրմ. *die Erbse, die Erbse-n* (հոգնակի թիվ).

Ռու. *снег* – *снежинка*, հյ. ձյուն – փաթիլ, գրմ. *der Schnee* – *die Schneeflocke*.

Ռու. *солома* – *соломинка*, հյ. ծղոտ – (համարժեք ձևը բացակայում է), գրմ. *das Stroh* – *der Strohalm*:

Երկրորդ շարքի բառերը վերջածանցների միջոցով ձևեր են բերել առավել փոքրի արժեքայնություն, առարկան դարձրել հաշվելի:

Ինչպես արդեն նշել ենք, անեզականների կողքին տարբերակվում են նաև անհոգնական գոյականներ, որոնք անեզականների նման համարվում են չեզոք մեկի և մեկից ավելիի քերականական հայեցակերպի նկատմամբ ու չեն կազմում հոգնակի ձևեր: Գոյականների այս տեսակը բնորոշ է ինչպես հայերենին, այնպես էլ գերմաներենին ու ռուսերենին: Այս երեք լեզուներում իմացական ընդհանրությունների կողքին կան նաև կառուցվածքային առանձնահատկություններ, որոնք իրենց հերթին հանգեցնում են բառիմաստի նեղացման կամ ընդլայնման: Անհոգնականները պետք է դիտել ոչ թե գոյականի եզակի թիվ, այլ միայն իրենց հատուկ բառիմաստներով եզակիաձև բառեր: Անհոգնական բառերի սովոր խումբ են կազմում հատուկ անունները (անձնանուններ, մականուններ, կեղծանուններ, տեղանուններ, աշխարհագրական անուններ), որոնք, կիրառվելով միայն եզակի թվով, արտահայտում են տվյալ անձի, տեղի անհատականությունը: Իհարկե որոշ դեպքերում, երբ նշվում է տվյալ տոհմի, ընտանիքի ազգանունը, այն կարող է ունենալ հոգնակի թվով կիրառություն, օր. *Буденброкеры* – *Буденброки* – *die Budenbrocks*:

Երբեմն պատմական հայտնի անձանց, հերոսների անունները գործածվում են իրենց բնորոշ հատկանիշի ընդհանրացմամբ՝ որպես հասարակ անուն, օրինակ՝ *Վարդաններ*, *Վասակներ*: Ինչպես *Հայ ազգը ծնել է և՛ Վարդաններ, և՛ Վասակներ*: Ռուսերենի համար՝ *Пушкины, Толстые*՝ «Неужели среди них находятся будущие Пушкины и будущие Толстые?» (Голицын, 2016, էջ 167) (թրգմ. «Արդյո՞ք նրանց թվում են ապագա Պուշկինները և Տոլստոյները» Ա. Ս.): Գերմաներենի համար՝ *Napoleons, Hitlers*՝ „Damit wird er zum Nachfolger von Napoleons und Hitlers“ (թրգմ. «Դրանով նա դառնում է Նապոլեոնների ու Հիտլերների հետևորդը» Ա. Ս.): Այս դեպքում հոգնակի թվով գոյականը ցույց է տալիս ոչ թե տվյալ անունը կրող մարդկանց, այլ նրանց բնորոշ հատկանիշն իրենց մեջ կրող մեկից ավելի անձանց թվաքանակ: Անհոգնական են նաև երկնային մարմինները՝ *արև* – *солнце* – *die Sonne*, *լուին* – *луна* – *der Mond*, *Օիր կաթին* – *Млечный Путь* – *die Milchstraße* և այլն, ինչպես նաև բնության երևույթները՝ *անձրև* – *дождь* – *Regen* (հայերենում և

ռուսերենում հնարավոր է հոգնակի տարբերակի գործածումը մասամբ «առատ տեղումներ» իմաստով), *ձյուն* – снег – Schnee, *եղյամ* – изморозь – Reif, մառախուղ – туман – Hagel: Միայն եզակի թվով են գործածվում նաև նյութ, զանգվածայնություն, հանածոներ ցույց տվող գոյականները՝ *նսկի* – золото – Gold, *երկաթ* – железо – Eisen, *ավազ* – песок – Sand, *փայտ* – дерево – Holz, *գինի* – вино – Wein: Վերջիններս չեն ենթարկվում թվակարգային վերլուծության: Այս հասկացությունները, եթե բաժանենք մասերի, ստացված մասերը ևս կունենան ամբողջի հատկություն և նույնպես կանվանվեն ամբողջի անունով՝ նշելով արդեն ոչ թե տվյալ երևույթի եզակիությունն ու հոգնակիությունը, որի դեպքում ունենում ենք միայն քանակային փոփոխություն, այլ հոգնակի ձևերի կիրառումը կրերի որակական և իմաստային առանձնահատկություններ (Камынина, 1999, էջ 53), ինչպես օրինակ, տվյալ գոյականի տարբեր տեսակներ՝ *փայտեր/փայտի տեսակներ* – сорта древесины – Hölzer, *գինիներ* – сорта вин – Weine: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, նյութական անունների դեպքում զրո վերջավորության փոխարինումը հոգնակիակերտ *եր/ներ* մասնիկներով առաջացնում է հաշվելիության հակադրություն, ինչի արդյունքում բառի եզակի ձևն արտահայտում է անհաշվելի զանգված, իսկ հոգնակի ձևը՝ եզակիում նշված զանգվածի տեսակայնություն (Ջահուկյան, 1974, էջ 180):

«Նստեցրին նրան փառքով օջախի վերին գլուխը, թանկագին գորգի վրա, համեցրին քիրագի չիբուխը ու բարև բռնած կանգնեցին ոտքի: Բերին ընտիր խորտիկներ և ազնիվ գինիներ: Աղա Նազարը նստել էր հպարտ ու բախտավոր» (Իսահակյան, 1975, էջ 276):

Ռուսերենում «"Тихие вина" термин часто используют виноделы» (թրգմ. ««Հանգիստ գինիներ» եզրույթը հաճախ գինեգործներն են օգտագործում» Ա. Ս.): Գերմաներենում „Einige portugiesische Weine gehören zu den besten der Welt“ (թրգմ. «Պորտուգալական որոշ գինիներ դասվում են աշխարհի լավագույն գինիների շարքին» Ա.Ս.): Երեք լեզուներում էլ հավաքական հասկացությունները անհոգնական գոյականներ են հիմնո. *նստիկանություն* – полиция – die Polizei, *բանակ* – армия – die Armee, *սաղարթ* – листья – das Laub, որոնք արտահայտում են միասնություն, ամբողջություն, միավորված գաղափար: Գոյականի հավաքական իմաստը հանդես է գալիս այնտեղ, որտեղ բառի հոգնակիությունը հնարավոր չէ, այդ իսկ պատճառով հատկապես առարկայնություն նշող գոյականների, կենդանական աշխարհի ներկայացուցիչների, մարդկանց դեպքում բառն ունի համըմբռնման (սինեկդոխա) նշանակություն: Նշանակությունը համըմբռնական է այն դեպքում, երբ նկատի ունենք առարկա կամ շնչավոր էակ՝ առանց որոշակիացման, այն է՝ եզակի ու հոգնակի թվակարգային ցուցիչի կիրառման:

Հողի, լրացումների և համատեքստի ուսումնասիրումը՝ որպես գոյականի եզակի թվի ցուցիչ

Երբեմն հնարավոր է դառնում վերացական, ինչպես նաև հավաքական գոյականների հոգնակի թվի կազմությունը, երբ երևույթի տրոհելիությունը կամ վերացական երևույթի տարբեր դրսևորումները արտահայտվում են բառաքերականական հավելյալ միջոցների կիրառմամբ:

Ա. Ռեֆորմատսկին խոսում է քերականական առեղծվածի մասին, քանզի հոգնակիի իմաստը արտահայտվում է եզակիի կաղապարով: Եթե եզակի թվի մյուս բևեռը կազմող հոգնակի թիվը արտահայտում է հոգնակիության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին, ապա հավաքական գոյականների կազմի մեջ մտնող առարկաները դիտարկվում են որպես մեկ ամբողջություն: Մա ակներև է դառնում շարահյուսական պլանում ևս, երբ հոգնակի թվով գոյականները ստանում են հոգնակի թվով դրված բայ-ստորոգյալ, իսկ հավաքական գոյականները եզակի թվով:

Եզակի թվով բառի կիրառման իմաստային դաշտի բովանդակային ծածկույթը պայմանավորված է նաև որոշյալ և անորոշ առմամբ, որը ուսումնասիրվող երեք լեզուներում ունի իմաստային նմանություն, բայց իրացման միմյանցից տարբեր միջոցներ: Այսպես գերմաներենում եզակի թվի միջոցով ամբողջ տեսակը, երևույթն արտահայտելու դեպքում գոյականը հանդես է գալիս որոշյալ հողի հետ, իսկ ռուսերենում որոշյալ ու անորոշ առումը, որպես քերականական կարգ, բացակայում է, այն հնարավոր է արտահայտել լրացումների *каждый, любой, некий, какой-то* միջոցով, ինչպես նաև ընդգծել համատեքստի միջոցով: Այս առումով թվի և համատեքստի փոխազդեցությունը երբեմն հանգեցնում է ոչ միայն բառային ու քերականական թվի՝ անհամապատասխանության, այլև իմաստակիր նոր հայեցակերպի որոշյալության և անորոշության առաջացման:

„So mußten sie eine eigene Herrschaftsideologie hervorbringen, die nicht nur ihre spezifischen Interessen zu legitimieren, sondern auch eine Welterklärung und ein umfassendes Bild **des Menschen** zu formulieren wußte, wie es seither für das gesamte westliche Denken der Moderne bis zum heutigen Tag hegemonial werden sollte und gegenwärtig dominierender ist als jemals zuvor.“ (Kurz, 1999, էջ 34) (թրգմ. «Այսպիսով՝ նրանք պետք է ստեղծեին իրենց գերիշխանության գաղափարախոսությունը, որն ի գորու կլիներ ոչ միայն օրինականացնելու իրենց իսկ ներհատուկ շահերը, այլև ձևակերպելու մարդու աշխարհայացքն ու համապարփակ բնութագիրը, որն, սկսած այդ ժամանակից ցայսօր, միտված էր դառնալու ամբողջ արևմտյան արդիական մտքի ռահվիրան և մինչ օրս ավելի գերիշխող է, քան երբևէ:» Ա. Ս.): Ավելին, այս և նման որոշ գոյականների դեպքում (թույլ հոլովման

պատկանող բոլոր գոյականները գերմաներենում՝ եզակի թվում, բացառությամբ ուղղական հոլովի, ստանում են *-en* վերջավորությունը, ինչը համընկնում է հոգնակի թվի վերջավորության հետ) եզակի թվի միակ ցուցիչը դառնում է հենց որոշյալ հոդը, որը ցույց է տալիս և թիվը, որով դրված է գոյականը, և՛ հոլովը: Այսպես, բերված օրինակում *des Menschen* բառաձևի դեպքում կարող ենք ասել, որ գոյականը հանդես է գալիս եզակի թիվ տրական հոլովով, իսկ հոդի բացակայության պարագայում հնարավոր չէր լինի պարզել, թե վերջինս որ հոլովով և որ թվով է կիրառված:

Հայերենում նույնպես տարբերակում ենք որոշյալ և անորոշ առում, որի միջոցով գոյականի արտահայտած առարկան ձեռք է բերում ծանոթ կամ անծանոթ բնույթ: Եթե որոշյալի կարգը ձևավորվում է *ը* կամ *և* հոդերի միջոցով, որոնք ունեն քերականական նույն արժեքը, և մեկի կամ մյուսի գործածությունը պայմանավորված է զուտ կիրառական, դիրքային տարբերությամբ, ապա անորոշ առումը ձևավորվում է աննշույթ, *օ* (զրո) վերջավորությամբ: Երբեմն առարկայի անորոշության շեշտման նկատառումով գործածվում է *մեկ* թվականից ծագած *մի* անորոշ դերանունը: «Մի հավք գարկի ես մի օր. // Թըռա վ, գընաց վիրավոր: // Թըռչում է միշտ իմ մըտքում // Թնը արնոտ ու մոլոր» (Թումանյան, 1990, էջ 29):

Եթե առարկան ծանոթ է խոսակցին, կամ վերջինիս մասին խոսվել է ավելի վաղ, ապա գոյականը, որ մատնանշում է այդ առարկան, գործածվում է որոշյալ հոդով, իսկ եթե առարկան ծանոթ չէ, հիշատակվում է առաջին անգամ կամ որոշակիացման անհրաժեշտություն չի տեսնում հեղինակը, ապա կիրառվում է անորոշ հոդով կամ առանց հոդի: Որոշյալ հոդի միջոցով առարկան առանձնանում է, որի շնորհիվ տարրորոշվում է դրա հայտնի լինելը: Մի նկատառում ևս՝ եթե առարկան, վերջինիս առարկայական վերաբերությունը հայտնի է բոլորին, ապա այն կիրառվում է որոշյալ առումով անկախ այն հանգամանքից մինչ այդ համատեքստում ունեցել է կիրառություն, թե ոչ: «Երկինքը շառագունում է»: *Երկինք* գոյականը գործածվում է որոշյալ առումով ոչ այն պատճառով, որ համատեքստի շրջանակներում արդեն վերջինիս մասին խոսվել է, այլ այն հանգամանքով պայմանավորված, որ այն բոլորին հայտնի ու իր տեսակով միակն է: Նույն իրացումը կարող ենք գտնել ռուսերենի և գերմաներենի համար, ինչպես՝ „Der Himmel färbt sich purpurn.“ Der Himmel «երկինք» բառը գործածվել է որոշյալ հոդով: «Небо багровеет.» ռուսերենի դեպքում որոշյալության հստակ ցուցիչը բացակայում է: Քերականական այս կարգը ներհատուկ է առավելապես ռոմանագերմանական լեզուներին և իր հստակ արտահայտությունն է գտնում այդ լեզուներում որոշյալ և անորոշ հոդերի միջոցով: Ռուսերենում, սակայն, հոդի բացակայությունը չի ենթադրում, որ այս քերականական կարգը չկա մարդկանց գիտակցության մեջ (Реформатский, 2004, էջ 318): Ռուսերենի դեպքում էական է դառնում նախադա-

սուրջան մեջ բառերի շարադասությունը, այն է՝ եթե բառն ունի հետադաս դիրք՝ հիմնականում անորոշ է, իսկ եթե առաջադաս է, ինչպես վերը նշված օրինակում, ապա որոշյալ է: Որոշյալությունը հստակեցնելու համար էական նշանակություն են ստանում հնչերանգը, ինչպես նաև հավելյալ բառերի՝ լրացումների (ցուցական դերանունների, մասնիկների՝ *этот, эта, это, эти, тот, та, то, те*, անորոշ դերանունների՝ *какой-то, какая-то, какое-то, какие-то*, թվականների՝ *один*, որ համարժեք է հայերենի *մի* և գերմաներենի *ein* անորոշ դերանվանը) կիրառումը: Ցուցական դերանունները, սակայն, միշտ չէ, որ լիարժեք համապատասխանում են հայերենի *ը/ն* և գերմաներենի *der/die/das* որոշյալ հոդերին, քանի որ վերջիններս առավել ընդհանրական իմաստ արտահայտելու հնարավորություն են ընձեռում և որոշյալ դերանունների համապատասխան այլ շարքով են հանդես գալիս (հմմտ. այս, այդ, այն, *dieser/diese/dieses, jener/jene/jenes*): Որքան էլ արտահայտման միջոցներն բովանդակային ծածկույթը տարբեր են, այդուհանդերձ մի բան ակնհայտ է. որոշյալ հոդի կամ համապատասխան լրացումների հետ եզակի թվով բառաձևը, դուրս գալով եզակիի սահմաններից, ունակ է արտահայտելու թվաքանակի անորոշություն, առարկայի կամ երևույթի ընդհանրական բնույթ՝ հոգնակիության իմաստով, առանց հոգնակիին հատուկ ցուցիչների կիրառման:

Ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, այն ձևակերպումը, թե գոյականի եզակի թիվը ցույց է տալիս մեկ (կամ մեկ հատ) առարկա, անկասկած պակասավոր է. սրանով չեն սահմանագծվում գոյականի բառային և քերականական արժեքները (Պետրոսյան, 1972, էջ 35): Գոյականի թիվը, լինի եզակի, թե հոգնակի, բացարձակ չէ, այլ պայմանավորված է հասկացության տեսակով, բնագավառով ու համատեքստով: Առհասարակ գոյականի եզակի թիվը, հիմնականում բնութագրվելով որպես բառի հիմնական, չնշույթավորված տարբերակ (Boettcher, 2009, էջ 31), ունի տարատեսակ կիրառություն: Երբ հեղինակը ասելիքին փորձում է տալ ընդհանրական բնույթ, չնշել առարկայի հստակ թիվ ու քանակ, ապա, որքան էլ հակասական հնչի, առավել լայն մասշտաբների ներգրավման, տարածական բնույթ տալու նպատակով կիրառվում է բառի հիմնական, աննշույթ եզակի ձևը. այդ պատճառով եզակի թվով մի դեպքում ներկայանում է անհատը, մի դեպքում խումբը, մի դեպքում էլ տվյալ բառաձևը տարածվում է ամբողջ տեսակի վրա, իսկ եզակի կիրառմամբ գոյականը հանդես է գալիս որպես տեսակի ներկայացուցիչ: Ասվածը մանրամասնենք օրինակով. «Մարդ, ինչու քո գոյության ամբողջ ընթացքում ընդունակ չեղար հասկանալ այս պարզ ճշմարտությունը, թե երբ բոլոր ճանաչեն բոլորին, կռիվը ինքնըստինքյան անհնարին կդառնա» (Փափազյան, 1981, էջ 395): Այստեղ *մարդ* գոյականը հանդես է գալիս առհասարակ մարդկանց անունից, այսինքն՝ նախադասությունը կարող ենք գրել նաև հոգնակի թվով, այն կունենա նույն իմաստը: «Եզակի թվի ձևի կիրառության իմաստային հիշյալ յուրահատկությունը մտածական

նրբությունների, քերականական նրբերանգների արտահայտություն է և չի խոսում ոչ եզակի թվի, ոչ էլ նրա գնահատման հակասականության մասին, քանի որ այն բխում է ասույթից, կոնտեքստից» (Աբրահամյան, Պառնասյան, Օհանյան, 1974, էջ 48): Կատարելով թվի քերականական կարգի փոփոխում՝ նախադասությունը իմաստային փոփոխություն չի կրի: Ռուսերենում. «Человек без мечты, что птица без крыльев» (թրգմ. «Մարդն առանց երազանքի նույնն է, ինչ հավքն առանց թևերի»)՝ Ա.Ս.): Գերմաներենում՝ „Tödlich dem Menschen ist das Unkenntliche“ (Engler, 2000, էջ 139) (թրգմ. «Մարդու համար մահացու է այն, ինչն անճանաչելի է»)՝ Ա.Ս.): Այս առումով եզակի թիվն առարկայի մեկ, եզակիության հետ մեկտեղ նշում է նաև հասարակ գոյականների տեսակն առհասարակ, ինչպես նաև հավաքական գոյականների դեպքում անքակտելի ամբողջություն, որի արդյունքում եզակի թիվը զույգ է տալիս առավել մեծ ու համապարփակ թվաքանակ, քան հոգնակին, քանի որ, եթե հոգնակին տարբերակված առարկաների մեկից ավելի, սակայն սահմանափակ թիվ է արտահայտում, ապա եզակին կարող է նշել տվյալ առարկայի, երևույթի կամ գաղափարի տեսակն առհասարակ: Ասվածը վառ դրսևորվում է նաև ազգություններն արտահայտող գոյականների՝ եզակի թվով կիրառման պլանում: Ինչպես օրինակ. «Օրհնեցե՛ք ռսի ոտը, Ծան-Ծանի տվե՛ք, իրար սիրեցե՛ք, դուք է՛ն աշխարհի ծնունդն եք, է՛ն ազգի զավակը, որ աշխարհ ամենայն զարմացրել են ու կզարմացնեն» (Աբովյան, 1981, էջ 115): Ակներն է, որ հեղինակը նկատի ունի ռուս ժողովրդին, ոչ թե մի ռուս մարդու, բնդհանրական, համըմբռնման իմաստով եզակի բառաձևը տարածվում է ամբողջ ժողովրդի վրա: Իմաստային այսօրինակ խտացումն օտար չէ ոչ գերմաներենին, ոչ էլ ռուսերենին: Հմնտ. “И верим; // Путь один держат к свету из древних пещер и трясин // Абхазец и тюрк, армянин и грузин!” (Брюсов, 2018, էջ 55) (թրգմ. «Եվ մենք հավատում ենք՝ // Գեթ մի ուղի գիտեն դեպ լույս // Թե՛ աբխազը, թե՛ թյուրքը, թե՛ հայն ու վրացին»)՝ Ա. Ս.): „Nicht der Hauptfeind ist der Türke“ (Schuder, 1987, էջ 105) (թրգմ. «Գլխավոր թշնամին թուրքը չէ»)՝ Ա. Ս.): Առհասարակ ազգային պատկանելությունն ու ազգությունը նշող եզակի թվով դրված գոյականները լավագույնս են արտացոլում պատմական ու քաղաքական նշանակալի իրադարձություններն ու անգամ ոճական երանգավորման միջոցով արտահայտում տվյալ հեղինակի, կամ ժողովրդի կանխակալ տրամադրվածությունը հիշատակվող պետության կամ ժողովրդի մասին: Ինչպես տեսնում ենք, եզակիի բազմիմաստությունը տարածվում է միայն բառիմաստային դաշտի վրա, իսկ քերականական տեսանկյունից վերջինիս իմաստը մեկն է՝ այն ներկայանում է իբրև մեկի և մեկից ավելիի քանակային հարաբերության առաջին եզր: Այս առումով թվի կարգի ուսումնասիրման համար անհրաժեշտ է տարբերակել թվի բառային և քերականական իմաստը: Թվի բառային իմաստը կապված է հաշվելի առարկաների հետ: Սա հարում է առավելապես մաթեմատիկական թվաքանակին, իսկ այն

առարկաները կամ երևույթները, որոնք հաշվելի չեն, չունեն բառային արտահայտություն: Այս է պատճառը, որ քերականությունը հստակ կանոնների կողքին առանձնացնում ու ուսումնասիրում է բազմաթիվ բացառություններ և զուգաձևություններ: Երբեմն բառի բառային հոգնակիության հնարավորության մասին կարելի է ենթադրել վերջինիս հետ գործածվող լրացումներից (հայերենի համար կիրառելի են հետևյալ դերանունները՝ *ցանկացած, յուրաքանչյուր, ամեն*, ռուսերենի դեպքում՝ *каждый, некоторый, всякий*, գերմաներենի համար՝ *jeder, alle, manche*): Ինչպես վերը նշվեց, վերջիններս առավել ակնհայտ են դրսևորվում բառակապակցություններում կամ առավել մեծ համատեքստում, այսպեղյալ լրացումները, զերծ մնալով ու անփոփոխ թողնելով քերականական թիվը, հուշում ու որոշակիացնում են բառայինը: Բառի քերականական թիվը մեկն է, բայց բառային իմաստը կարող է տարբեր լինել: Նման լրացումները հուշում են, որ գոյականը մեկն է ցանկացածից, յուրաքանչյուրից կամ որևէ խմբից, ինչը ենթադրում է հոգնակիության հնարավոր տարբերակների առկայությունը: Եթե, օրինակ, գոյականը կարող է հանդես գալիս թվական լրացման հետ, ստանալ քանակային լրացումներ, ուրեմն այն կարող է ունենալ հոգնակի կազմության տարբերակներ: Վ. Բելոշապկովան այս դեպքում խոսում է իրական ու քերականական թվերի մասին, երբ ունենք համընկնում, ինչպես օրինակ՝ *գիրք* և իրական թիվն է եզակի, և քերականական թիվը, իսկ *ջուր* - *вода* - *das Wasser* գոյականի դեպքում ունենք քերականական եզակի, իսկ իրական թվի տեսանկյունից անորոշ քանակայնություն, ռուսերենում *сани* «սահնակ», քերականական հոգնակիություն, իրական թիվն՝ անորոշ: Բերված օրինակները ցույց են տալիս, որ երբեմն բառին վերագրված եզակի կամ հոգնակի թիվն ունի հարաբերական բնույթ, քանի որ միշտ չէ, որ քերականական ձևն ու բառիմաստը համընկնում են: Երբ նշում ենք որոշակի առարկա, որն ունի իր համարժեք հոգնակի կամ եզակի թիվը, ապա քերականական և իմաստային պլանում ունենք յիարժեք համաձայնեցում, օր.՝ *սեղան* - *սեղաններ*, *սեղան*՝ եզակի թիվ թե՛ արտահայտած իմաստով, թե՛ քերականական ձևով, *սեղաններ*՝ հոգնակի իր իմաստով և, իհարկե, նշույթավորված հոգնակիակերտ մասնիկով - *ներ*, սակայն, երբ ունենք վերացական երևույթ, զանգվածայնություն, նյութ արտահայտող կամ առհասարակ չափման միավոր չունեցող հասկացություն կամ հավաքական գոյական, ապա ունենում ենք քերականական ձևի և իմաստային կադապարի անհամաձայնեցում, օր.՝ *կաթ* - *молоко* - *Milch*, երեք յեզուներում էլ այն արտահայտվում է քերականական եզակի ձևով, բայց քանակային անորոշ իմաստավորմամբ: Նման պարագայում հավաքական և վերացական գոյականները դրսևորում են թվակարգային անհամապատասխանություն՝ հոգնակիի բառային թիվը արտահայտվում է քերականական աննշույթ՝ եզակի թվի միջոցով: Ռուսերենում կան նաև ձևով հոգնակի, բայց իմաստով եզակի

հասկացություններ, որոնց մասերն առանձին վերցված գոյություն չեն ենթադրում, այլ ընկալվում են իրենց ամբողջականության մեջ՝ очки, ножницы, брюки, ворота, սակայն այս գոյականներն իրենց համարժեք եզակիի ձևերն ունեն ն՝ հայերենում , ն՝ գերմաներենում՝ *ակնոց – ակնոցներ* - die Brille - die Brillen, *մկրատ – մկրատներ* - die Schere - die Scheren, *տաբատ – տաբատներ* - die Hose - die Hosen, *դարպաս – դարպասներ* - das Tor – die Tore: Ռուսերենում քանակի մասին պատկերացում կազմելու համար պետք է կիրառել թվականներ կամ քանակ արտահայտող այլ միջոցներ կամ մոտավոր պատկերացման համար դիմել ավելի լայն համատեքստի: Ասվածը վերաբերում է նաև այն բաներին, որոնք թե՛ հոլովով, թե՛ թվով մնում են անփոփոխ, ինչպես՝ пальто «վերարկու», такси «տաքսի», кенгуру «կենգուրու»: Առաջին հայացքից ունենք եզակի թվով գոյական, սակայն, գործածելով բառակապակցության մեջ կամ ստանալով քանակական ցուցիչներ, կունենանք այլ պատկեր, երբ իմաստային և քերականական թվային ընկալումը չի համընկնում, օր.՝ старое пальто (եզակի թիվ) «հին վերարկու» - старые пальто (հոգնակի թիվ) «հին վերարկուներ» կամ три пальто «երեք վերարկու»: «Եզակիության – հոգնակիության իրական հակադրության տեսակետից գոյականները կարելի է բաժանել երկու խմբի՝ հաշվելի և անհաշվելի: Իրենց հերթին, հաշվելի գոյականները կարող են կրել եզակիության – հոգնակիության նշանակություն, իսկ մյուս խմբի բառաձևերը արտահայտում են երևույթներ, որոնց քանակայնությունը որոշարկված չէ» (Беловапкова, 1989, էջ 414):

Գոյականի քերականական թիվը պարզելու համար կարելի է այն փոխարինել ուղղական հոլովում համապատասխան դերանունով՝ *նա, այն*, он, она, оно, er, sie, es կամ գործածել քանակական թվականների հետ: Եթե մաթեմատիկայում թիվն արտահայտում է առարկայի որոշակի քանակ, ապա քերականության տեսանկյունից այն արտահայտում է եզակիություն և հոգնակիություն ընդհանրապես: Քերականական եզակի թիվը ենթադրում է առարկայի եզակիություն և հոգնակիության հնարավորություն: Այն ցույց է տալիս, որ առարկան վերցված է եզակի թվով, սակայն ունի հոգնակի կազմելու հնարավորություն: Իհարկե ասվածը չի բացառում նման հասկացությունների՝ ոճական նկատառումներով հոգնակի թվով կիրառումը:

Եզրակացություն

Բովանդակային պլանում ի հայտ եկած նմանությունները ցույց են տալիս, որ թվի քերականական կարգը օբյեկտիվ կարգ է: Երեք լեզուներում էլ տարբերակում ենք եզակի – հոգնակի հակադրությունը, երեք լեզուներում էլ այս հակադրությունից դուրս գոյություն ունեն անեզականներ ու անհոգնականներ, որոնք գուցե ունեն տարբերություն-

ներ, սակայն դասակարգման, քերականական տեսանկյունից դրսևորում են ակնհայտ նմանություններ: Ուսումնասիրվող երեք լեզուներում եզակի թվի իմացաբանական ոլորտը բավականին լայն է. այն իր բովանդակությամբ տեղակայում է մեկ առարկա, միասեռ առարկաների ամբողջություն, վերացականություն, զանգվածայնություն, անհատականություն, թանձրացականություն (որոշակիություն):

Եզակիի բազմանշանակ իմաստը տարածվում է միայն բառիմաստային դաշտի վրա, քերականական տեսանկյունից վերջինիս իմաստը մեկն է՝ այն ներկայանում է իբրև մեկի և մեկից ավելիի քանակային հարաբերության առաջին եզր:

Եզակի ենթակարգը ենթադրում է գոյականների այն բազմությունը, որոնց դեպքում հնարավոր է հոգնակիի կազմությունը, իսկ հաշվելի կամ անհաշվելի լինելը հնարավոր է հստակեցնել քանակային ցուցիչների, թվականների հետ կիրառման հատկությամբ, իսկ քանակային լրացումներ կարող են ունենալ միայն հաշվելի գոյականները:

Հաշվելի գոյականների դեպքում թվի քերականական կարգի եզակի ենթակարգը համընկնում է առարկայի իրականում քանակային ընկալման հետ, սակայն անհաշվելի գոյականների դեպքում, որոնք չունեն հոգնակի ենթակարգի կազմության ձև, այս օրինաչափությունը խախտվում է: Այս դեպքում քերականական և իմաստային թվերը չեն համընկնում:

Չուգադրելով լեզուներն ու ի հայտ բերելով քերականական թվի ու դրա իմաստային դրսևորումների ընդհանրությունները, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ յուրաքանչյուր լեզու առանձնանում է եզակի ու հոգնակի, որոշակի ու վերացական գոյականների՝ միայն իրեն հատուկ արտահայտչամիջոցներով, որը պայմանավորված է լեզվամտածողությամբ ու լեզվական իրողությունների քերականական դրսևորմամբ:

Գրականություն

- Արբահամյան, Ս., Պառնասյան, Ն., Օհանյան, Հ. (1974). *Մամանակակից հայոց լեզու*, հ. 2, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա:
- Պետրոսյան, Հ. (1972). *Գոյականի թվի կարգը հայերենում*, Երևան, Երևանի համալսարան:
- Ջահուկյան, Գ. (1974). *Մամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա:
- Белошапкива, В. (1989). *Современный русский язык*. Москва, Высшая школа.
- Камынина, А. (1999). *Морфология*. Москва, МГУ.
- Реформатский, А. (2004). *Введение в языковедение*. Москва, Аспект Пресс.
- Boettcher, W. (2009). *Grammatik verstehen, I-Wort*. Tübingen, Max Niemeyer.

- Helbig, G., Buscha, J. (2000). *Leidfaden der Deutschen Grammatik*. Berlin, Langenscheidt.
- Krifka, M. (2000). Dimensionen grammatischer Variation – Ein sprachtypologischer Überblick WS 2000/2001. Institut für deutsche Sprache und Linguistik, Humboldt-Universität zu Berlin. <https://amor.cms.hu-berlin.de/~h2816i3x/GenusNumerus.pdf>.

Գեղարվեստական գրականություն

- Արսլյան, Իս. (1981). *Վերք Հայաստանի*, Երևան, Երևանի համալսարան:
- Գյումրեցի, Ա. (1990). *Տղամարդկային համբերություն*, Երևան, Արևիկ:
- Թումանյան, Հ. (1990). *Երկերի ժողովածու*, հ. 2, Երևան, Հայաստանի ԳԱ:
- Իսահակյան, Ա. (1975). *Երկերի ժողովածու*, հ. 3, Երևան, Հայաստան:
- Փափազյան, Վ. (1981). *Երկերի ժողովածու*, հ. 2, Հետադարձ հայացք, Երևան, Սովետական գրող:
- Брюсов, В. (2018). *Меа. ЗСФСР, Планеты и Солнце: Союз и Республики строим*. Москва, Т8.
- Вишняков, Я. (2007). Уничтожить всю коварную Европу. *Родина*, N1.
- Голицын, С. (2016). *Записки уцелевшего*. Москва, Встреча.
- Улицкая, Л. (2011). *Девочки: Ветряная оспа*. Москва, АСТ/Астрель.
- Engler, W. (2019). *Die Ostdeutschen*. Berlin, Aufbau TB.
- Kurz, R. (1999). *Schwarzbuch Kapitalismus*. Frankfurt, Eichborn.
- Schuder, R. (1987). *Agrippa und Das Schiff der Zufriedenen*. Berlin, FysicalBook.
- Süskind, P. (1985). *Das Parfum*. Zürich, Diogenes.

А. Согомоян – Выражение единственного числа существительных и семантические проявления в литературных восточно-армянском, русском и немецком языках (попытка сравнительного исследования). – В данной работе единственное число имени существительного выражается в сочетании трех языков – современного восточноармянского, немецкого и русского. При этом оно представляется не только как одна сторона противопоставления единственного и множественного числа, но и как выражение многогранного употребления существительного, выделяя общие черты данной категории в исследуемых языках, а также характерные признаки у одного или обоих из них. Каждый из этих трех языков имеет свои специфические лексико-грамматические особенности и употребляет в большей степени единственное число имени существительного, с целью придания понятию более пространственного и всеобщего характера. В семантическом аспекте во всех трех языках существительное в единственном числе имеет полисемантический характер, а со структурной точки зрения наиболее распространено употребление маркированных и синтетических форм.

Ключевые слова: грамматический порядок, единственное число, множественное число, маркированность, немаркированность, словоформа, лексическое число, грамматическое число

A. Soghomonyan – The Expression of The Singular Number of Nouns and the Semantic Manifestations in Literary Eastern Armenian, Russian and German (an attempt for a comparative study). – This paper studies the expression of the singular form of nouns through a comparison of three languages: Modern Eastern Armenian, Russian, and German. It is presented not only as one aspect of the opposition between singular and plural forms but also as an exploration of the multi-meaningful use of nouns. The study highlights common features of this category in these languages, as well as their distinctive characteristics. The analysis of numerous examples reveals that each of these three languages, with its specific lexical and grammatical features, tends to use the singular form of the noun more frequently than the plural, imparting the concept a broader and more general character. From a semantic perspective, the singular form of the noun is polysemous not only in Armenian but also in German and Russian. From a structural standpoint, both marked and synthetic forms are commonly used.

Key words: grammatical category, singular, plural, marked, unmarked, word form, lexical number, grammatical number